ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«05» հունիսի 2017 թվական N 62-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 218-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերի, 5-րդ մասի 1-ին պարբերության դրույթներով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի առաջարկը՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 218-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «3.133.211.700 (երեք միլիարդ մեկ հարյուր երեսուներեք միլիոն երկու հարյուր տասնմեկ հազար յոթ հարյուր)» թիվը և բառերը փոխարինել «3.274.928.900 (երեք միլիարդ երկու հարյուր յոթանասունչորս միլիոն ինը հարյուր քսանութ հազար ինը հարյուր)» թվով և բառերով,

2) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «3.174.507.543 (երեք միլիարդ մեկ հարյուր յոթանասունչորս միլիոն հինգ հարյուր յոթ հազար հինգ հարյուր քառասուներեք)» թիվը և բառերը փոխարինել «3.316.224.743 (երեք միլիարդ երեք հարյուր տասնվեց միլիոն երկու հարյուր քսանչորս հազար յոթ հարյուր քառասուներեք)» թվով և բառերով:

2. Գյումրի համայնքի 2017 թվականի բյուջեի հավելվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 6-րդ հատվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համապատասխանաբար NN 1,2,3,4 հավելվածների:

3. Որոշման 3-րդ և 4-րդ կետերը շարադրել մեկ 3-րդ կետում՝ հետևյալ խմբագրությամբ.

«3. Թույլատրել համայնքի ղեկավարին որոշմամբ հաստատված հատկացումների սահմաններում.

1) անհրաժեշտության դեպքում 2017 թվականի բյուջեով հաստատված հատկացումների ընդհանուր գումարի 15% սահմաններում կատարել վերաբաշխում որոշումով հաստատված ծախսերի գործառական դասակարգման առանձին խմբերի և ենթախմբերի,ինչպես նաև ենթախմբերի ներսում այն պայմանով,որ թույլ չտրվի սույն որոշմամբ յուրաքանչյուր ենթախմբի մասով նախատեսված հատկացումների կրճատում ոչ ավել,քան 20 %-ի չափով կամ ավելացում 35 %-ից ավելի չափով:»

2) համայնքի ավագանու մշտական գործող համապատասխան հանձնաժողովի ներկայացմամբ հաստատել սոցիալական ծրագրերով նախատեսված ծառայությունների և շահառուների ցանկն ու կազմակերպել վճարումների կատարումը,

3) բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման այլ ծախսերի (միջոցառումների) կազմակերպում, նվիրատվությունների և սուբսիդիաների համար նախատեսված հոդվածներով հատկացումների վերծանումը և ծախսերի իրականացումը»:

4. Որոշման «5.» և «6.» կետերի համարակալման թվերը փոխարինել համապատասխամաբար «4.» և «5.» թվերով:

5. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝

1) սույն որոշմամբ հաստատված հատկացումների սահմաններում՝ բյուջետային օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում, համայնքային ենթակայության կազմակերպությունների պահպանման ծախսերի նախահաշիվներում կատարել փոփոխություններ,
2) կատարել համապատասխան փոփոխություններն օրենքով սահմանված կարգով:

Կողմ (17)	Դեմ (0)	Ձեռնպահ(3)
Ս. Բալասանյան		Ս. Մարտիրոսյան
Ա. Ադամյան		Հ. Եղիազարյան
Հ. Կարապետյան		Հ. Պողոսյան
Լ. Խաչատրյան		
Է. Մկրտչյան		
Տ.Հովհաննիսյան		
Մ. Սահակյան		
Լ. Սանոյան		
Վ. Եդիգարյան		
Ա. Գրիգորյան		
Վ. Հունանյան		
Գ. Սարգսյան		
Կ. Միքայելյան		
Տ. Փանոսյան		
Գ. Գրիգորյան		
Կ. Թաթարյան		
Ա. Տոնոյան		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«05» հունիսի 2017 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«05» հունիսի 2017 թվական N 63-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 07-Ի N 38-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-մասի 1-ին կետով, 3-րդ մասով և հիմք ընդունելով Գյումրու զինկոմիսարիատի ներկայացրած գրությունը (համայնքապետարանում մուտքագրված 2017 թվականի մայիսի 15-ին N 7911 թվագրմամբ)՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի ապրիլի 07-ի «Մայիսյան տոների կապակցությամբ դրամական օգնություն հատկացնելու մասին» N 38-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետի «38 (երեսունութ)» թիվը և բառը փոխարինել «39 (երեսունինը)» թվով և բառով, «570 000 (հինգ հարյուր յոթանասուն հազար)» թիվը և բառերը փոխարինել «585 000 (հինգ հարյուր ութսունհինգ հազար)» թվով և բառերով,

2) որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետով հաստատված N 5 հավելվածի «Հայրենական Մեծ պատերազմի թիկունքի մասնակիցներ» բաժնի ընդամենը 9 տողի «9» թիվը փոխարինել «10» թվով, «135 000» թիվը փոխարինել «150 000» թվով,

3) ընդամենը տողի «570 000 (հինգ հարյուր յոթանասուն հազար)» թիվն ու բառերը փոխարինել «585 000 (հինգ հարյուր ութսունհինգ հազար)» թվով ու բառերով,

4) «Հայրենական Մեծ պատերազմի թիկունքի մասնակիցներ» բաժինը լրացնել հետևյալ նոր 10-րդ տողով՝

10	Առաքելյան Մերուժան Խաչատուրի	ք. Գյումրի,Պիոներական փող,շենք 3 բն.3	15000

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում կատարված փոփոխությունների հետ կապված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2017 թվականի բյուջեի 10/4/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (20) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ս. Բալասանյան

Ա. Ադամյան

Հ. Կարապետյան

Լ. Խաչատրյան _____

Է. Մկրտչյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Մ. Սահակյան _____

Լ. Սանոյան _____

Վ. Եդիգարյան _____

Ա. Գրիգորյան _____

Վ. Հունանյան _____

Գ. Սարգսյան _____

Կ. Միքայելյան _____

Տ. Փանոսյան _____

Գ. Գրիգորյան _____

Կ. Թաթարյան _____

Ա. Տոնոյան _____

Ս. Մարտիրոսյան _____

Հ. Եղիազարյան _____

Հ. Պողոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«05» հունիսի 2017 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«05» հունիսի 2017 թվական N 64-Ա

«ԱՌՏ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ, ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով «ԱՌՏ» երիտասարդական, բնապահպանական և խորհրդատվական հասարակական կազմակերպության նախագահ Գոռ Թորոսյանի գրությունը (համայնքապետարանում մուտքագրված 2017 թվականի մայիսի 22-ին N8188 թվագրմամբ)՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է**.

1.«ԱՌՏ» երիտասարդական, բնապահպանական և խորհրդատվական հասարակական կազմակերպությանը որպես նվիրատվություն հատկացնել 200.000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 2017 թվականի հուլիս ամսին «ԱՌՏ» երիտասարդական, բնապահպանական և խորհրդատվական հասարակական կազմակերպության և Վորլդ Վիժն Շիրակի մարզի տարածքային ծրագրի հետ համատեղ երիտասարդական վրանային ճամբարի կազմակերպման նպատակով:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2017 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Կողմ (17)	Դեմ (0)	Ձեռնպահ(3)
Ս. Բալասանյան		Ս. Մարտիրոսյան
Ա. Ադամյան		Հ. Եղիազարյան
Հ. Կարապետյան		Հ. Պողոսյան
Լ. Խաչատրյան		
Է. Մկրտչյան		
Տ.Հովհաննիսյան		

Մ. Սահակյան _____

Լ. Սանոյան _____

Վ. Եդիգարյան _____

Ա. Գրիգորյան _____

Վ. Հունանյան _____

Գ. Սարգսյան _____

Կ. Միքայելյան _____

Տ. Փանոսյան _____

Գ. Գրիգորյան _____

Կ. Թաթարյան _____

Ա. Տոնոյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«05» հունիսի 2017 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«05» հունիսի 2017 թվական N 65-Ա

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ «ՀՈՒՇԱՐՁԱՆ ՀԱՅՐԻԿԻՍ» ԳՐՔԻ ՏՊԱԳՐՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով Հովհաննես Շիրազի «Հուշարձան հայրիկիս» գրքի տպագրման և հանրությանը որպես գրական ժառանգություն ներկայացնելու կարևորությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով «Հովհաննես Շիրազի հուշատուն-թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արա Պապանյանի գրությունը (համայնքապետարանում մուտքագրված 2017 թվականի մայիսի 25-ին N 8364 թվագրմամբ)՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. «Հովհաննես Շիրազի հուշատուն-թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 1 250 000 (մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ «Հուշարձան հայրիկիս» գրքի տպագրման նպատակով:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2017 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

	Կողմ (20)	Դեմ (0)	Ձեռնպահ(0)
Ս. Բալասանյան			
Ա. Ադամյան			
Հ. Կարապետյան			
Լ. Խաչատրյան			
Է. Մկրտչյան			
Տ.Հովհաննիսյան			
Մ. Սահակյան			

Լ. Սանոյան _____

Վ. Եդիգարյան _____

Ա. Գրիգորյան _____

Վ. Հունանյան _____

Գ. Սարգսյան _____

Կ. Միքայելյան _____

Տ. Փանոսյան _____

Գ. Գրիգորյան _____

Կ. Թաթարյան _____

Ա. Տոնոյան _____

Ս. Մարտիրոսյան _____

Հ. Եղիազարյան _____

Հ. Պողոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ **Մ. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«05» հունիսի 2017 թ.